ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/06, 17.01.2022թ.

Բողոք բերող անձ՝ «ՏԷՏԷ հաշվապահություն» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՊԼԱՆՇԵՏ/Ա-34» էլեկտրոնային աճուրդ

Գնման առարկան՝ համակարգչային պլանշետների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՊԼԱՆՇԵՏ/Ա-34» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ չեղյալ համարել «ՏԷՏԷ հաշվապահություն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը և գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

Հասցե՝ ք. Երևան Մելիք Ադամյան 1

«ՏԷՏԷ հաշվապահություն» ՍՊԸ տնօրեն Էդգար Ղազարյանից

Հասցե՝ ք. Երևան, Մանանդյան 22,

հեռ.+374 93 667255

e-mail: edgarghazaryan@outlook.com

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 130

Գնանշման հարցման ընթացակարգի

Ծածկագիր՝ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՊԼԱՆՇԵՏ/Ա-34

Գնման առարկա՝ համակարգչային պլանշետի ձեռք բերում

Բ Ո Ղ Ո Ք

1. Վեճի առարկան.

1.1 ՀՀ ոստիկանությունը համակարգչային պլանշետի գնման նպատակով 2021թ. դեկտեմբերի 17-ին հրապարակել է ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՊԼԱՆՇԵՏ/Ա-34 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

1.2 «ՏԷՏԷ հաշվապահություն» ՍՊԸ-ն ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՊԼԱՆՇԵՏ/Ա-34 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերին համապատասխան ներկայացրել է հայտ:

1.3 ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՊԼԱՆՇԵՏ/Ա-34 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը 04.01.2022թ. 2-րդ արձանագրությամբ նշել է, որ ՏԷՏԷ հաշվապահություն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ հավելված 1.2-ը, որի պատճառով որոշեց հնարավորության տալ Ընկերությանը՝ շտկել անհամապատասխանությունը:

1.4 ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՊԼԱՆՇԵՏ/Ա-34 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը 07.01.2022թ. 3-րդ արձանագրությամբ նշել է, որ Ընկերությունը շտկում չի կատարել, ուստի Ընկերության հայտը մերժվել է:

1.5 www.gnumner.am կայքում հրապարակվել է ՀՀ ԿԱ ոստիկանություն կարիքների համար ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՊԼԱՆՇԵՏ/Ա-34 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

2. Բողոքի փաստացի և իրավական հիմքերը.

Գնումների մասին ՀՀ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ Հայտերը գնահատվում են **հրավերով սահմանված կարգով**: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ ֆինանսների նախարարի համապատասխան հրաման սահմանված հրավերի և ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՊԼԱՆՇԵՏ/Ա-34 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի օրինակելի ձևերում բացակայում է **իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ներկայցման որևէ օրինակելի ձև**, այդ իսկ պատճառով հայտով, իսկ այնուհետև շտկում պահանջելու ժամանակ, անհասկանալի է եղել, թե ինչպես պետք է ներկայացնել 1.2 հավելվածը:

3. Բողոքի պահանջը.

Ընկերությունը, ղեկավարվելով Գնումների մասի ՀՀ Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում է՝

Պարտավորեցնել ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՊԼԱՆՇԵՏ/Ա-34 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ չեղյալ համարել «ՏԷՏԷ հաշվապահություն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը և գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը:

Կից ներկայացվում է.

1. Բողոքի ներկայացման համար նախատեսված վճարման անդորրագրի պատճենը:

2. Ընկերության տնօրենի անձը հաստատող փաստաթղթի և պետռեգիստրի վկայականի պատճենները:

3. ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՊՊԳՎ/ՊԼԱՆՇԵՏ/Ա-34 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի արձանագրությունների պատճենները:

«ՏԷՏԷ հաշվապահություն» ՍՊԸ տնօրեն՝ Էդգար Ղազարյան

Կ. Տ.